ԿԱՐԾԻՔ

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի նախագիծը/ Հետայսու տեքստում՝ նաև ԳԾ/ հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/5472/about:

Նախագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից /հետայսու տեքստում՝ նաև Կազմակերպություն/ ԳԾ վերաբերյալ կատարված մի շարք առաջարկներ ներառվել են Նախագծում (այդ թվում՝ պետական տուրքերի վճարման մասով արտոնությունների տրամադրման, մասնավոր անձանցից ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգերի սահմանման, հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու ընթացակարգերի վերանայման և այլ հարցերի վերաբերյալ), ինչը դրական ենք գնահատում: Այնուամենայնիվ նախագծից դուրս են թողնվել Մարդու իրավունքների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող մի քանի միջոցառումներ, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Կյանքի իրավունք.

Կյանքի իրավունքի համատեքստում վերստին առաջարկում ենք ԳԾ-ում ներառել հետևյալ գործողությունները.

1.1. Բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համատեքստում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության թվին բավարար քանակի և հասանելիության ապաստարանների ստեղծում, մշակել դրանց ներկայացվող նորմատիվային պահանջները, իրականացնել գործող ապաստարանների գնահատում՝ ըստ նորմատիվների, իրականացնել պատշաճ կահավորում և հասանելիության ապահովում:

1.2. Խոցելի խմբերի անձանց, այդ թվում՝ միայնակ բնակվող տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անվտանգության ապահովման համար և նրանց կարիքներից ելնելով՝ ամրագրել համայնքային իշխանությունների պատասխանատվությունը ռազմական գործողությունների, բնական աղետների ժամանակ նշված անձանց տարհանումը, տեղափոխումը, ապաստարանում տեղավորումը ապահովելու/կազմակերպելու հարցում:

2. Խոշտանգումների արգելքը.

2.1. Նախագծի Գործողություն 2.8.-ով նախատեսվում է ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները: Այս կետի համատեքստում բացակայում են հիմնավորումները, թե ինչով է պայմանավորված մասնագիտացված ստորաբաժանումը 2 հաստիքներով ավելացնելը,

արդյո՞ք ուսումնասիրվել է, օրինակ, խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում քննվող գործերի քանակը և այլ հանգամանքներ:

2.2. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի քննության արդյունավետության ապահովման համատեքստում անհրաժեշտ է իրականացնել դասընթացներ ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով, ինչպես նաև նրանց համար մշակել ուղեցույցներ, ձեռնարկներ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի քննության արդյունավետության ապահովման համար:

2.3. Քրեականացնել և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել պատասխանատվություն՝ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի համար:

2.4. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետը, որը նախատեսում է պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, **որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝ առանձնացնելով տվյալ հանցակազմը առանձին հոդվածի ներքո՝** հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածը ներառված է Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, սակայն բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կատարված իշխանական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը իր բնույթով կոռուպցիոն հանցագործություն չէ, ինչը պրակտիկայում հանգեցնում է այս հիմքով հարուցված քրեական գործերի դատական ընդդատության խնդիրների, մասնավորապես՝ պրակտիկայում դրանք քննվում են Հակակոռուպցիոն դատարանի կողմից, ինչը չի բխում տվյալ դատարանի ստեղծման նպատակի և մասնագիտացման տրամաբանությունից:

3. Գործի արդար քննության իրավունք.

3.1. Այս գլխում նախատեսված է գործողություն 3.1՝ օրենսդրորեն նախատեսել կատարողական վարույթների ձգձգման հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Այս գործողությունն ունի առնվազն հստակեցման կարիք: Նախագծով չի պարզեցվում, թե ինչպիսի միջոցի մասին է խոսքը, և թե որ իրավական ակտերում և ինչ բնույթի փոփոխություններ է նախատեսվում կատարել: Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրով

նախատեսված է առանձին գլուխ՝ հարկադիր կատարման համակարգի բարեփոխումները, այդ թվում՝ Կատարողական վարույթի մասին նոր օրենքի մշակումը: Նման պայմաններում անհասկանալի է նշված գործողության առանձնացումը ՄԻՊ ռազմավարության ԳԾ-ով, և հարց է առաջանում՝ արդյոք այն չի կարող քննարկվել Դատական և իրավական ռազմավարության ԳԾ-ի համատեքստում:

Մյուս կողմից ինչպես ՀԿԱԾ-ի, այդպես էլ այլ պետական մարմինների վարչարարությամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այս առումով սահմանված ընթացակարգերը՝ դատական հայցի ներկայացում՝ վարչական մարմնի վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով, այնուհետև՝ դիմումի ներկայացում՝ վարչական մարմնին՝ վնասի հատուցման պահանջով, և մերժման դեպքում՝ կրկին դատական հայցի ներկայացում վնասների հատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով, անիմաստ երկարաձգում են քաղաքացուն պատճառված վնասների հատուցման գործընթացը, հատկապես հաշվի առնելով վարչական մարմինների՝ վնասի հատուցման դիմումները մերժելու պրակտիկան: Եթե Նախագծի հեղինակը նպատակ ունի պարզեցնել վնասների հատուցման ընթացակարգը, կարծում ենք՝ այն պետք է վերաբերի ոչ միայն Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, այլ նաև պետական մյուս մարմինների վարչարարությամբ պատճառված վնասների հատուցման ընթացակարգերի պարզեցմանը՝ ապահովելով դրա արդյունավետությունը:

3.2. Նույն գլխում նախատեսված է գործողություն 3.3՝ օրենսդրորեն նախատեսել ֆիզիկական անձի դեմ ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու ընթացակարգ, այդ թվում՝ ընտանեկան բռնության գործերով:
Հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում, և ըստ էության՝ Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է ֆիզիկական անձանցից ոչ նյութական վնասների հատուցում պահանջելու հնարավորություն, կարծում ենք գործողությունը ենթակա է վերաձևակերպման՝ վերանայել և լրացնել այն ոլորտները, երբ անձը կարող է ֆիզիկական անձից պահանջել պատճառված ոչ նյութական վնասների հատուցում, այդ թվում՝ նշվածը չսահմանափակել միայն ընտանեկան բռնության գործերով, այլ ընդհանրապես նախատեսել մասնավոր հարաբերություններում հիմնարար իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասների փոխհատուցման հնարավորությունը՝ ապահովելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի ձևավորած պահանջները:

3.3. Գործողություն 3.5.՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից հայցվորներին կենսաթոշակի նշանակման, հաշվարկի, վերահաշվարկի (վարչական վարույթ), աշխատանքային ստաժի հաստատման

(քաղաքացիական վարույթ) հետ կապված հայցերով և դիմումներով: Նախագծի հեղինակներն ընդունել են Կազմակերպության առաջարկն այս մասով, ինչը դրական ենք գնահատում: Այնուամենայնիվ վերստին առաջարկում ենք նշված գործողության համատեքստում նաև նախատեսել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով, հայցվորներին բոլոր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման պահանջի հայցերով՝ ի ապահովումն անձի իրավունքի պաշտպանության արդյունավետության:

4. Առողջության պահպանման իրավունք

4.1. **Նախատեսվում է գործողություն 5.1՝** երաշխավորել պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին հոգեբանական անվճար օգնության շարունակական տրամադրումը: Հոգեբանական անվճար օգնության դիմող և ստացող պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների թվի աճն ապահովելու նպատակով առաջարկում ենք նաև ֆինանսավորումը, այդ թվում՝ մեծացնել հասարակական կազմակերպություններին և կառույցներին տրամադրվող սուբսիդիաների տրամադրման և ավելացման տեսքով՝ հաշվի առնելով, որ ռազմական գործողություններից տուժած անձինք հաճախ խուսափում են պետական կառույցներին դիմելուց:

5. Հավաքների ազատություն.

5.1. Նախատեսվում է գործողություն 6.1.՝ վերանայել «Հավաքների ազատության մասին» օրենքը՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելիության առնչությամբ: Այս կետի մասով առնվազն հստակ չէ, թե ինչ հիմնավորմամբ է նախատեսվում իրականացնել միջազգային չափորոշիչների ուսումնասիրություն / բացակայում է որևէ հիմնավորում/, ինչը նաև անհնարին է դարձնում նշված կետի հետագա բովանդակային մշտադիտարկումը:

5.2. Ապահովել հավաքների ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումների առնչությամբ արդյունավետ քննության իրականացումը և մեղավոր անձանց հայտնաբերումն և պատշաճ պատասխանատվության ենթարկումը:

6. Իրավահավասարություն, խտրականության արգելք.

6.1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2020-2022թթ. գործողությունների ծրագրով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկի հիման վրա նախատեսվել էր 47.1 կետը՝ ապահովել հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման 2022թ. տարեկան

հաշվետվության համաձայն[1]՝ Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը ապահովելու և անգործունակության ինստիտուտի վերանայման նպատակով մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պատասխանի՝ նախագիծը հանվել է շրջանառությունից:

6.2. Փաստացի տվյալ գործողությունը չի կատարվել, չեն ներդրվել հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքի ապահովման և պաշտպանության կառուցակարգեր: Ըստ այդմ՝ հաշվի առնելով նաև, որ տվյալ գործողության կատարումը բխում է ՀՀ միջազգային պարտավորություններից՝ անհրաժեշտ է ներառել այն 2023-2025 Գործողությունների ծրագրում և ապահովել հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը:

7. Աշխատանքային իրավունք.

7.1. ԳԾ-ն չի պարունակում անձի աշխատանքի իրավունքի իրացման մասով որևէ գործողություն:

Նախորդ ԳԾ-ն այս մասով ունի մասամբ կատարված պարտականություն՝ Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ազգային ծրագիր, մյուս կողմից՝ դեռևս 28.06.2022 թվականին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի եվ սոցիալական պաշտպանության 2022-2026 թվականների ռազմավարությունը, արդյունքային շրջանակը, մշտադիտարկման եվ գնահատման ծրագիրը եվ ֆինանսական շրջանակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը /հետայսու տեքստում՝ Նախագիծ, հղումը՝ https://www.e-draft.am/projects/4491/: Կազմակերպության առաջարկները աշխատանքային օրենսդրությամբ և վերաբերելի այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասով, մերժվել են, նշելով, որ դրանք կարգավորվելու են Զբաղվածության ռազմավարությամբ / տե՛ս նույն հղումը, ամփոփաթերթ բաժնում/, կամ դրանք նշված ռազմավարությամբ գերակա չեն համարվել, կամ այն հիմնավորմամբ, որ նշված ռազմավարությունն առավել կենտրոնացած է սոցիալական ապահովության, սոցիալական երաշխիքների ապահովման վրա: Որոշումը մինչ այժմ չի ընդունվել:

[1] http://www.e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1

«Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մինչ այլժ չի ընդունվել: Նոր ռազմավարության նախագծի մշակման մասին տեղեկություններ չկան:
Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության նպատակներից մեկը՝ աշխատանքային իրավունքի պաշտպանության ընթացակարգերը և մեխանիզմների բարելավելումն է: Հետևաբար անհրաժեշտ է որպես առանձին բաժին պահպանել աշխատանքային իրավունքների վերաբերյալ միջոցառումները՝ ապահովելով նաև օրենսդրական կարգավորում պահանջող խնդիրների լուծումը, որոնք չեն նախատեսվում այլ ռազմավարություններով, այդ թվում՝

- Վերանայել Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի վեցերորդ կետով, ինչպես նաև 122-րդ հոդվածով նախատեսված՝ վստահությունը կորցնելու հիմքով աշխատողին աշխատանքից ազատելու վերաբերյալ կարգավորումները՝ ընդլայնելով վստահության կորստի դեպքերը, հիմքերը, սուբյեկտներին, այդ թվում՝ ներառելով աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների կամ կարգապահական կանոնների այնպիսի խախտումներ թույլ տալը, որոնց հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս, կամ վնաս է պատճառվել վերջինիս համբավին, հեղինակությանը կամ վտանգ է ստեղծվել անձանց կյանքի կամ առողջության համար: Բացի այդ տարբերակել ուսումնական հաստատություններում ուսումնական, վարչական, դաստիարակչական գործառույթներ իրականացնող սուբյեկտները, ուսումնական հաստատություններում ուսումնական, վարչական, դաստիարակչական գործառույթների իրականացման հետ անհամատեղելի արարք հասկացությունները, հստակեցնել դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կարգապահական խախտում թույլ տալու սուբյեկտը,
- Հստակեցնել Օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի հինգերորդ կետով նախատեսված՝ պարբերական կարգապահական խախտումների հիմքով աշխատանքից ազատելու վերաբերյալ Աշխատանքային օրենսգրքում և վերաբերելի այլ օրենքներում սահմանված կարգավորումները: Մասնավորապես, համապատասխանեցնել աշխատանքային օրենսդրությամբ և տարբեր ոլորտների աշխատանքային հարաբերությունները կարգավորող առանձնահատուկ օրենքները՝ ապահովելով միասնական մոտեցում,
- Վերանայել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ աշխատանքային վեճերի համար նախատեսված եռամսյա ժամկետը՝ փոխարինելով ավելի ողջամիտով, օրինակ՝ 6-ամսյա ժամկետով.
- Վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել աշխատանքային վեճեր քննելու կարգ՝ հատուկ վարույթի շրջանակներում՝ ապահովելով քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի հետ հավասար երաշխիքներ:
- Օրենսգրքի 265-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ կերպ. «Աշխատանքային վեճերի կարգավորումը» և սահմանել աշխատողի համար դատարան դիմելու և իր իրավունքների խախտումը հաստատվելու դեպքում Օրենսգրքով սահմանված երաշխիքներից օգտվելու՝ հարկադիր պարապուրդի գումարի, պատճառված վնասների հատուցման

հնարավորություն նաև միջազգային պայմանագրերով, աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրով սահմանված իր իրավունքների խախտման այլ դեպքերում[2]:

[2] Աշխատանքային իրավունքի ոլորտում Կազմակերպության առաջարկները առավել մանրամասն ներկայացված են «Աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն. աշխատանքային իրավունքի խնդիրներ թեմայով» զեկույցում, տե՛ս https://prwb.am/2022/07/12/zekuyc%e2%80%a4/: